



“ Անգղները լեշակեր են և համարվում են բնության սանիտարներ: ”

**Հիմնական վտանգները**

- Բնադրավայրերի կորուստ
- Որսագողություն
- Թունաքիմիկատների կիրառում
- գյուղատնտեսության մեջ Ձագերի և ձվերի անօրինական վաճառք
- Տուրիստական ենթակառուցվածքների ոչ գրագետ զարգացում

“ Բնադրող զույգերի թվաքանակի նվազում ”




**Ի՞նչ ենք անում մենք**

- Բնադրման հաջողության գնահատում՝ ամենամյա մոնիտորնգի միջոցով
- Չովի ուսումնասիրություն՝ արբանյակային տվիչների միջոցով
- Էկոկրթություն՝ աշխատանք համայնքների օգպրոցների՝ որսորդների հետ
- Սպառնացող վտանգների գնահատում

“Գերմանիայի Բնության Պահպանության Միության (NABU) Հայաստանյան Մասնաճյուղ”  
 Իսահակյան 18, սենյակ 3, 0025  
 Երևան, Հայաստան  
 Հեռ. +37444599949  
 Էլ. Փոստ՝ armenia@nabu.am  
 www.nabu.am

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ  
**ԱՆԳՂՆԵՐԻ**  
 ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ  
 ԵՎ ՊԱՅՊԱՆՈՒԹՅՈՒՆ



Սև անգղ  
 (Aegypius monachus)



Մորուսավոր անգղ  
 (Gypaetus barbatus)



Սպիտակագլուխ անգղ  
 (Gyps fulvus)



Գիշանգղ  
 (Neophron percnopterus)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՊՂՆԵՐԸ

Հայաստանում բնադրում են աշխարհում տարածված 23 տեսակի անգղներից չորսը՝ **Գիշանգղը** (*Neophron percnopterus*), **Սև անգղը** (*Aegypius monarchus*), **Մորուցավոր անգղը** (*Gypaetus barbatus*), **Սպիտակագլուխ անգղը** (*Gyps fulvus*): Գերմանիայի բնության պահպանության միության (NABU) հայաստանյան մասնաճյուղն իրականացնում է Հայաստանում բնադրող բոլոր չորս տեսակի անգղների ուսումնասիրությանն ու պահպանությանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև հանրության իրազեկման մակարդակի բարձրացման նպատակով՝ էկոլոգական բազմապիսի միջոցառումներ և դասընթացներ:

ԱՎԵԼԻ ՄՈՏ ԱՆՊՂՆԵՐԻՆ՝  
NABU-ի հետ

### Գիշանգղ



Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և Բնության պահպանության միջազգային միության (IUCN) կարմիր ցուցակում՝ որպես վտանգված (*endangered*) տեսակ: Տեսակը հանդիպում է ՀՀ գրեթե ողջ տարածքում: Բնադրում է Խոսրովի արգելոցում, Զանգեզուր կենսոլորտային համալիրում, Դիլիջան և Սևան ազգային

պարկերում և այլուր: Գիշանգղը այն եզակի թռչնատեսակներից է, որը սնունդ հայթհայթելու համար կարող է կիրառել այլ առարկաներ, օրինակ՝ ջարեր կամ փայտեր: Իսկ նրանց գլխի դեղին գույնը պայմանավորված է գոմարզով սնվելու հետ:



### Սպիտակագլուխ անգղ



Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և Բնության պահպանության միջազգային միության (IUCN) կարմիր ցուցակում՝ որպես նվազագույն մտահոգություն առաջացնող (*least concern*) տեսակ:

Տեսակը հանդիպում է ՀՀ գրեթե ողջ տարածքում Բնադրում է Խոսրովի արգելոցում: Զանգեզուր կենսոլորտային համալիրում: Դիլիջան ազգային պարկում և այլուր: Սպիտակագլուխ անգղները բնադրում են գաղութներով՝ միմյանց հարևանությամբ: Սոցիալական էակներ են՝ սնունդ նկատելիս տեղեկացնում են միմյանց և միասին հավաքվում լեշի շուրջը: Սպիտակագլուխ անգղներն ունեն հրասայի տեսողություն և մոտ 6.4 կիլոմետրից կարող են նկատել սնունդը:

### Մորուցավոր անգղ



Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և Բնության պահպանության միջազգային միության (IUCN) կարմիր ցուցակում՝ որպես վտանգման եզրին (*near threatened*) գտնվող տեսակ:

Տեսակը հանդիպում է ՀՀ գրեթե ողջ տարածքում: Բնադրում է Խոսրովի արգելոցում: Զանգեզուր կենսոլորտային համալիրում: Դիլիջան ազգային պարկում և այլուր: Տեսակն անվանվում է նաև Գառնանգղ՝ պայմանավորված սննդի տրոփման պայմաններում պատվով որս իրականացնելու հմտությամբ՝ Սեվում է ոսկորներով և ոսկրածուծով: Մորուցավոր անգղների կրծքային հատվածի փետուրների կարմրանարնազույնը պայմանավորված կարմիր պվազներում «լոգանքներով»:



### Սև անգղ



Գրանցված է ՀՀ Կարմիր գրքում և Բնության պահպանության միջազգային միության (IUCN) կարմիր ցուցակում՝ որպես վտանգման եզրին (*near threatened*) գտնվող տեսակ:

Տեսակը հանդիպում է ՀՀ կենտրոնական և հարավային մարզերում: Բնադրում է Խոսրովի արգելոցում: Հայաստանում հանդիպող թռչնատեսակներից ամենամեծն է: Թևերի բացվածքը կարող է հասնել մինչև 3.1 մետրի: Հիմնականում բնադրում է գիհիների և տանձենիների վրա: